

**„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ“
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՏՈՒԿ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1.ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) հատուկ բաժինը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որի լիազորությունները և գործառույթները կարգավորվում են ՀՀ կառավարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության իրավական ակտերով և ինստիտուտի և սույն կանոնադրություններով:
- 1.2 Հատուկ բաժնի (այսուհետ՝ բաժին) ընթացքում հիմք են ընդունվում լիազոր մարմնի կողմից հաստատված տիպային փաստաթղթերը:
- 1.3 Բաժինն անմիջականորեն ենթակա և հաշվետու է ինստիտուտի ղեկավարին:
- 1.4 Ինստիտուտի ուսանողների փաստաթղթերը (անձնական գործերը) պահպանվում են ինստիտուտի հատուկ բաժնում՝ պետի անմիջական պատասխանատվությամբ:

2.ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Բաժնի խնդիրներն են՝

- 1) ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի, վարչակառավարչական ապարատի, գիտական, ուսումնաօժանդակ վարչատնտեսական աշխատողների, սովորողների զինակոչիկ և զինապարտների ամրագրումը, որի համար հիմք են ընդունվում ինստիտուտի ներքին իրավական ակտերը:

2.2 Բաժինն իր առջև դրված խնդիրների լուծման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 2) ինստիտուտի առաջին կուրսեցիների անձնական գործերի հաշվառում և ձևակերպում, ինչպես նաև նրանց և աշխատող զինապարտների S-2 ձևի անձնական քարտերի լրացում,
- 3) հատուկ հաշվառման փաստաթղթերի /դիպլոմ, ակադեմիական տեղեկանք/ լրացում, պահպանում և հանձնում,

- 4) զինճառայության տարկետման իրավունքից օգտվող ուսանողների թիվ 26 ձևի լրացում և դրանք զինկոմիսարիատներ առաքում,
- 5) բոլոր կուրսերի ուսանողների տեղեկանքների առաքում տարբեր գերատեսչություններ,
- 6) բուժական ֆիզկուլտուրայի հրահանգիչների վկայականների ձևակերպում,
- 7) առաջին կուրսեցիների այբենական գրքերի վարում,
- 8) հեռակա ֆակուլտետի բոլոր ուսանողների հաշվառում,
- 9) շրջանավարտների և հեռացված ուսանողների անձնական գործերի ձևակերպում և հանձնում արխիվ,
- 10) աշխատող զինապարտների հաշվառում, ամրագրման ձևակերպում,
- 11) բաժնի գործունեության տարեկան հաշվետվությունների կազմում:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Բաժինը գլխավորում է վարիչը, որը նշանակվում և ազատվում է ռեկտորի հրամանով:

3.2 Բաժնի վարիչը ունի միանձնյա ղեկավարման իրավունք և պատասխանատվություն է կրում բաժնի վրա դրված սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների իրականացման, ինչպես նաև ռեկտորի հանձնարարությունների կատարման իրականացման համար:

3.3 Բաժնի վարիչը առաջարկություն է ներկայացնում բաժնի կառուցվածքի և աշխատողների միջև ծառայողական պարտականությունների բաշխման վերաբերյալ:

4. ԲԱԺՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

4.1. Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

*Ուժը կորցրած ճանաչել ինստիտուտի գիտական խորհրդի՝ 31.01.2012թվականի նիստում հաստատված՝ 'Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ' պետական ոչ առևտրային կազմակերպության 'Հատուկ բաժնի կանոնադրությունը',: